Գործում է 02.06.2026 թվականից
Տեղեկատվական ամփոփագրում նշված պայմանները գործարքի կատարման պահին կարող են փոփոխված լինել:
Մանրամասների համար՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ,
Նալբանդյան 48, ք. Երևան 0010, ՀՀ,
Հեռ.՝ +(37410) 59 20 20
Ինտերնետային կայք՝ www.amiobank.am **, Էլ. փոստ՝** info@amiobank.am

AMIO PRO

ՓԱԹԵԹԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՓԱԹԵԹԻ ՄԻԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		
Փաթեթի անվճար սպասարկման պայման	Հաճախորդի՝ Բանկում գործող հաշիվների (ներառյալ ավանդների և պարտատոմսերի) միջին օրական մնացորդը վերջին 3 ամսվա ընթացքում պետք է կազմի նվազագույնը 15 միլիոն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ: Հաշվարկը կատարվում է Բանկի կողմից ստուգումն իրականացնելու օրը ՀՀ ԿԲ կողմից տվյալ արտարժույթի համար սահմանած փոխարժեքով: կամ Վերջին 3 ամսվա ընթացքում հաճախորդի՝ Բանկում գործող հաշիվներով/քարտերով մուտքային միջին ամսական շրջանառությունը պետք է կազմի առնվազն 600,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ: *Բացառությամբ՝* *-հաճախորդի հաշիվների/քարտերի միջև մուտքային գործարքների,* *-կանխիկ մուտքային գործարքների,* *-հատուկ բանկային հաշիվների/քարտերի (Սոցիալական ապահովության հաշիվ (կենսաթոշակներ, պարբերական բնույթ կրող նպաստներ և դրամական այլ վճարներ), սոցիալական փաթեթի հաշիվ, անվանատիրոջ հաշիվ, պետական աջակցության հաշիվ, միանվագ դրամական վճարների հաշիվ և այլն) մուտքային գործարքների:*	
Փաթեթի միացման վճար	Եթե հաճախորդը բավարարում է վերոնշյալ պայմաններից որևէ մեկին	Եթե հաճախորդը չի բավարարում վերոնշյալ պայմաններից որևէ մեկին
	Անվճար	**5,700** ՀՀ դրամ
Փաթեթի սպասարկման վճար	Եթե հաճախորդը բավարարում է վերոնշյալ պայմաններից որևէ մեկին	Եթե հաճախորդը չի բավարարում վերոնշյալ պայմաններից որևէ մեկին
	Անվճար	**5,700** ՀՀ դրամ եռամսյակային
Փաթեթի հիմնական պայմաններ	Փաթեթը տրամադրվում է միայն ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդներին: Փաթեթի ակտիվացման համար ՀՀ դրամային բանկային հաշվի բացումը պարտադիր է: Հաճախորդը չպետք է ունենա Բանկի հանդեպ ժամկետանց պարտավորություն (ներառյալ դեբիտորական պարտք, գերածախս և այլն): Յուրաքանչյուր հաճախորդ կարող է ունենալ գործող 1 փաթեթ:	
Փաթեթի շրջանակում միջնորդավճարների գանձման կարգ	Հաճախորդի դրամային բանկային հաշվին մնացորդի բացակայության դեպքում փաթեթի շրջանակում միջնորդավճարները գանձվում են հաճախորդի՝ Բանկում բացված այլ հաշիվներից (արտարժույթով հաշիվների դեպքում իրականացվում է փոխարկում՝ փոխարկման օրվա Բանկի անկանխիկ փոխարժեքով): Հաճախորդի՝ Բանկում գործող հաշիվներին դրական մնացորդի բացակայության և համապատասխան միջնորդավճարների գանձման անհնարինության դեպքում (եռամսյակային վճարների դեպքում ավելի քան 4 անգամ շարունակ գանձելու անհնարինության դեպքում), Բանկն իրավունք ունի դադարեցնել փաթեթի գործողությունը՝ վերջինիս շրջանակում մատուցվող ծառայությունների նկատմամբ սահմանելով Բանկի գործող սակագները կամ փակելով դրանք: Փաթեթի շրջանակում եռամսյակային ստուգումը և միջնորդավճարի գանձումը (փաթեթի անվճար սպասարկման պայմաններին չբավարարելու դեպքում) իրականացվում է	

	փաթեթը բացելուց հետո 3 ամիս անց:
Փաթեթ ակտիվացնելու համար անհրաժեշտ է մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ Նալբանդյան սպասարկման կենտրոն, ինչպես նաև հնարավոր է դիմել ԱՄԻՕ մոբայլ հավելվածով և Բանկի պաշտոնական կայք-էջով: Փաթեթը ապաակտիվացնելու համար անհրաժեշտ է այցելել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ Նալբանդյան սպասարկման կենտրոն, ինչպես նաև դիմել Ամիո մոբայլ հավելվածով:	

ՓԱԹԵԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Բանկային հաշիվ		
1.1.	Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի
1.2.	Քանակ	Մեկական յուրաքանչյուր արժույթից
1.3.	Հաշվի բացման և սպասարկման վճար	**Անվճար**
1.4.	Հաշվին ՀՀ դրամով միջոցների մուտքագրում մասնաճյուղերի դրամարկղերում	**Անվճար**
1.5.	Հաշիվների բացման, փակման, սպասարկման կարգը և այլ պայմանները	Համաձայն ԱՄԻՕ Բանկ ՓԲԸ բանկային և առարկայագուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր)կանոնների:
2.Քարտ		
2.1.	Քարտատեսակ/քարտի դաս	**Visa Platinum** կամ **Mastercard World** **Visa Gold** կամ **Mastercard Gold**
2.2.	Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի
2.3.	Քանակ	1-ական յուրաքանչյուր դասի քարտից՝ հաճախորդի ընտրությամբ, իր նախընտրած արժույթով
2.4.	Տարեկան սպասարկման վճար	**Անվճար**
2.5.	Քարտին ՀՀ դրամով միջոցների մուտքագրում մասնաճյուղերում	**Անվճար**
2.6.	Կանխիկացում Բանկի բանկոմատներից	
	Օրական մինչև 1,000,000 ՀՀ դրամ	**Անվճար**
	Օրական 1,000,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում	**Կանխիկացվող գումարի 0.3%**
2.7.	Կանխիկացում Arca անդամ բանկերի բանկոմատներից	
	Օրական մինչև 100,000 ՀՀ դրամ	**Անվճար**
	Օրական 100,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում	**Կանխիկացվող գումարի 1%**
2.8.	SMS հաղորդագրության վճար	**Անվճար**
	Մինչև 500 ՀՀ դրամ գործարքներ	**Չի ուղարկվում**
	Հաճախորդի կողմից գործարքների նվազագույն շեմը 501-4,999 ՀՀ դրամ սահմանելու դեպքում	**10 դրամ**
	5,000 ՀՀ դրամ և ավելի գործարքների դեպքում	**Անվճար**
2.9	Քարտերի տրամադրման, ակտիվացման, բլոկավորման, վերաթողարկման, ինչպես նաև օգտագործման և այլ պայմանները՝	համաձայն ԱՄԻՕ Բանկ ՓԲԸ-ի վճարային քարտերի թողարկման և սպասարկման հիմնական ընդհանուր)կանոնների

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.Ավանդներ		
3.1.	Բանկի մասնաճյուղերում և «Նալբանդյան սպասարկման» կենտրոնում «Շահավետ» ավանդատեսակով ավանդ ձևակերպելիս արտոնյալ տոկոսադրույքներ	**+ 0.25%**՝ ՀՀ դրամով ավանդի դեպքում **+ 0.15%**՝ ԱՄՆ դոլարով ավանդի դեպքում **+ 0.10%**՝ եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդի դեպքում
4.Վարկեր[1]		
4.1.	Ֆիզիկական անձանց տրամադրվող անշարժ և շարժական գույքի գրավով վարկեր	**Բանկում գործող անվանական տոկոսադրույքից - 0.2% տոկոսադրույքի զեղչով**
4.2.	Ավտովարկ	

[1] *Վարկերի տրամադրումը իրականացվում է համաձայն վարկերի տրամադրման պայմանների, որոնց կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://amiobank.am/loans*

5.Ապահովագրություն[2]		
5.1.	Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրություն՝ 15 օր մեկ տարվա ընթացքում	**Անվճար**
5.2.	Ճանապարհորդական անհարմարություններից ապահովագրություն (ուղեբեռի, թռիչքի ուշացման և գնումների ապահովագրություն)	Visa/Mastercard վճարահաշվարկային համակարգերի կողմից մատուցվող ծառայությունների պայմանների համաձայն՝ Visa քարտեր Հայաստանում | Visa Home - Mastercard Benefits - Armenia
6.Concierge ծառայություն Visa Platinum և Mastercard World քարտերի համար		
6.1.	Միջազգային անձնական օգնական /Chatbot Concierge ծառայություն	**Անվճար**
6.2.	Վիրտուալ անհատական մենեջեր և շուրջօրյա աջակցության հնարավորություն	
7.Հատուկ ճանապարհորդական ծառայություններ[3]		
7.1.	Օդանավակայանների բիզնես սրահների անվճար մուտքի հնարավորություն	Visa/Mastercard վճարահաշվարկային համակարգերի կողմից մատուցվող ծառայությունների պայմանների համաձայն
7.2.	Արտահերթ սպասարկում / Fast Track ծառայություն (առաջնահերթության սկզբունքով օդանավակայանում գրանցումների արագացված գործընթաց)	
7.3.	Internet Roaming ծառայություն	
8.Լրացուցիչ ծառայություններ		
8.1.	Պահատեղերի տրամադրում	**Բանկի գործող սակագներից 30% զեղչ**
8.2.	Ստանդարտ տեղեկանքների և քաղվածքների տրամադրում	**Անվճար**
8.3.	Բանկի կողմից սահմանված օրինակելի ձևով լիազորագրի տրամադրում	
9.Սպասարկման արտոնություններ		
9.1.	Մասնաճյուղերում և «Նալբանդյան» սպասարկման կենտրոնում արտահերթ սպասարկում	

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

- Փաթեթի շրջանակում բացված հաշիվների/քարտերի՝ սույն Տեղեկատվական ամփոփագրով չնախատեսված այլ պայմանները սահմանվում են համաձայն «ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ» կողմից ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրվող ծառայությունների սպասարկման սակագների»:
- Փաթեթում ներառված ծառայությունների այլ պայմանները՝ համաձայն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ տվյալ ծառայությունների համար գործող պայմանների:
- Բանկային/քարտային հաշվում (այսուհետ՝ Հաշիվ կամ Ավանդ՝ համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի) առկա դրամական միջոցների նկատմամբ տոկոսների հաշվարկ և վճարում՝ Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է օրական կտրվածքով՝ յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ Հաշվի փաստացի մնացորդի նկատմամբ: Ընդ որում, Բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա՝ 1/366 հարաբերակցությունը): Բանկը հաշվարկված տոկոսները հաշվեգրում է Հաշվին (կապիտալացնում է) ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջին օրը:
- Բանկը Հաշվում առկա դրամական միջոցները վերադարձնում է Հաճախորդին նրա առաջին իսկ պահանջով՝ համաձայն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ բանկային և առարկայագուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոններ –ի պայմանների:
- **Բանկը, հանդիսանալով Ֆիզիկական անձ-ավանդատուի հարկային գործակալ, կատարում է գանձումներ համաձայն ՀՀ հարկային օրենսդրության: Ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարի 10% (տաս տոկոսի) չափով:**

---

[2] *Ապահովագրական ծառայությունները տրամադրվում են Բանկի գործընկեր ապահովագրական ընկերությունների կողմից՝ իրենց պայմաններին համապատասխան*

[3] *Ծառայությունների հասանելիությունը, ծավալը և պայմանները սահմանվում են VISA/MasterCard վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից: Մատուցվող ծառայությունների պայմանները կարող են փոփոխվել կազմակերպությունների կողմից: Վերջիններիս պայմաններին և ակցիաներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումներով՝*

- https://cis.visa.com/visa-in-armenia/cis-am.html
- https://mastercard-benefits.com/

- Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքների կատարման դեպքում արժույթի փոխարկումն իրականացվում է գործարքի կատարման պահին Բանկի կողմից սահմանված անկանխիկ փոխարժեքով:
- Հաճախորդը պարտավոր է պահպանել ՀՀ օրենսդրության, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ բանկային և առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոնների, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի վճարային քարտ(եր)ի թողարկման և սպասարկման հիմնական ընդհանուր) կանոնների, Փաթեթային սպասարկման պայմանագրի, Բանկային և առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոններին միանալու մասին դիմում-պայմանագրի և Վճարային քարտի թողարկման և սպասարկման դիմում-պայմանագրի դրույթները:
- Հայտարարություն՝ Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Առանց Հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է Բանկի կողմից ուղարկված կարճ հաղորդագրության (SMS) միջոցով:
- Փաթեթի բացման և գործառնությունների իրականացման համար Հաճախորդը Բանկ է ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ)/սոցիալական քարտ կամ վերջինս չունենալու մասին տեղեկանք (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում ՀԾՀ/ սոցիալական քարտ չի պահանջվում):
- Հաճախորդի հասցեի կամ անվան (ազգանվան) փոփոխության, անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերի փոփոխության, ինչպես նաև Հաճախորդի տրամադրած այլ անձնական տվյալներում փոփոխությունների դեպքում Հաճախորդը պարտավոր է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին՝ անհրաժեշտ փոփոխություններն իրականացնելու համար, ընդ որում՝ Հաճախորդը պատասխանատվություն է կրում վերոնշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքների համար:
- Հաշվի բացման, սպասարկման և/կամ դադարեցման ընթացքում, ելնելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության պահանջից, «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքից, «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտ»-ի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու անհրաժեշտությունից, ինչպես նաև հաշվի առնելով այլ տարաբնույթ հանգամանքներ՝ Բանկը կարող է պահանջել Հաճախորդից լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:
- ՀՀ հարկային օրենսգրքի և «ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման միասնական հաշվետվողական ստանդարտ»-ի (CRS) պահանջների համաձայն՝ Բանկը կարող է ոչ ռեզիդենտ հաճախորդների հաշիվների և հարկային ռեզիդենտության վերաբերյալ որոշակի տեղեկատվություն հավաքագրել և փոխանցել ՀՀ Պետական եկամուտների կոմիտեին: Պահանջվող տեղեկատվությունը Բանկին չտրամադրելու դեպքում՝ Բանկը ՀՀ Հարկային օրենսգրքի պահանջներին համապատասխան ստիպված կլինի հրաժարվել (դադարեցնել) Հաճախորդի ֆինանսական հաշիվներով գործարքներ կատարելուց, բացառությամբ Հաճախորդի անուով այլ ֆինանսական հաստատությունում բացված հաշվին Հաճախորդին պատկանող դրամական միջոցները փոխանցելու կամ դրամական միջոցներն առձեռն Հաճախորդին տրամադրելու գործարքներից:
- Բանկն իրավունք ունի փոփոխելու Փաթեթի սպասարկման պայմանները, Հաշվում եղած դրական դրամական միջոցների մնացորդի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքի չափը, ինչպես նաև Հաշվի սպասարկման այլ պայմանները, եթե այլ բան նախատեսված չէ Հաշվի պայմանագրով: Պայմանագրի գործողության ընթացքում կատարված պայմանագրի պայմանների, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի փոփոխությունների վերաբերյալ, որոնք հանգեցնում են տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Բանկը գրավոր, Հաճախորդի կողմից ընտրված Բանկի հետ հաղորդակցման եղանակով տեղեկացնում է Հաճախորդին՝ փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ, իսկ Հաճախորդին պարտադիր տրամադրման ենթակա այլ տեղեկատվությունում Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխություն կատարելու դեպքում փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը Հաճախորդին տրամադրվում է վերջինիս նախընտրած եղանակով համապատասխան փոփոխության որոշման կայացումից ոչ ուշ, քան փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ, բացառությամբ վարկային բյուրո տվյալները ուղարկելու դեպքի, այլ դեպքերում՝ նշված տեղեկատվությունում կատարված փոփոխությունը Հաճախորդին տրամադրվում է ոչ ուշ, քան համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց և Բանկի տեղեկանալուց 7 աշխատանքային օր հետո: **ՀԱՃԱԽՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՋԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**
- **Ձեր Ֆինանսական տեղեկատուն՝ https://www.fininfo.am**

- **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:**
- ԱՄԻՕ Մոբայլ բանկինգի վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք գտնել **այստեղ:**
- **Երաշխավորված ավանդի չափերը՝**
  «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) բանկային ավանդների (այդ թվում Հաշվին առկա դրամական միջոցների) հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:
  Երաշխավորվում են Հաճախորդի ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային Ավանդները: Օրենքով սահմանված են երաշխավորված Ավանդների հետևյալ չափերը.
  եթե Հաճախորդը բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.
  եթե Հաճախորդն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.
  եթե Հաճախորդն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.
  եթե Հաճախորդն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ եւ արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:
  Հաճախորդի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և Հաճախորդի նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ:
  Եթե Հաճախորդն անվճարունակ բանկում ունի առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր է, ապա երաշխավորվում է նրա առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում իր մասնաբաժնի հանրագումարը՝ սույն օրենքով սահմանված կարգով և չափով:
  Եթե Հաճախորդն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության հաշվարկված դրական տարբերության հիման վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով և չափով:
  Երաշխավորված ավանդ չի համարվում այն բանկային ավանդը՝
  ա) որը պատկանում է տվյալ բանկի ղեկավարին և (կամ) նրա ընտանիքի անդամներին.
  բ) որը պատկանում է տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին և (կամ) նրա ընտանիքի անդամներին.
  գ) որի սեփականատերը (համասեփականատերը) հրաժարվել է իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից.
  դ) որն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ դրա սեփականատերը հակառակը չի ապացուցել.
  ե) որը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքը առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով: